# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 29.11.2021թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-21/03 «Պետության կարիքների համար մասնագիտացված կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «14» «12» 2023 թ.

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովհսեփյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաբայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կատարող) հիմք ընդունելով 29.11.2022թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-21/03 «Պետության կարիքների համար մասնագիտացված կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 2 հավելվածում նախատեսված գումարն ավելացնել 444 000 (չորս հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամով՝ համաձայն հավելվածի:

1.2 Գնորդն իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ | «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ |
| ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24 | ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4, |
| Երևանի թիվ 1 ՏԳՓ | «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018005588 | Հ/Հ 1930002706140200 |
| ՀՎՀՀ 01836525 | ՀՎՀՀ 00219641 |
| ---------------------- Ա. Հովսեփյան | ---------------------- Ա. Բաբայան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
<< 14 >> << 12 >> 2023 թ. կնքված
N 2 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ծառայությունների

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Հոդված | Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | 98111120/2 | Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ | 4241 | - | - | - | - | - | - | - | - | - | - | 444 000 | 444 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525
________________ Ա. Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4,
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1930002706140200
ՀՎՀՀ 00219641
________________ Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ.Տ